

Դուրս գացած լրագրաց ճան, ու
ծախքը խմբագրութեան վրայ է:
Լրագրոյս վերաբերեալ նշանակ-
կամ որ եւ ինչ գրութիւն խմբագիր
—Տնօրէնին պիտի ուղղուի, Կ. Պետ-
լիք, Չինիի խան, Մատիտի գրասենե-
սակը:

Ճամբու ծախքը չվճարուած նստ-
ժակներուն տիրոջ

ԼՐԱԳԻՐ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆ

«Անդ-ղիոյ պատեհազմական միջոցները իրատաւութեամբ են միւս տէրութեանց պատեհազմական միջոցներէն, կրէն Անդ-ղիական Տէլ յէլ յարտէրը: Դեռատախտորհուրդը մեզան մ'ընեղ կը կարծէ յայտարարութեամբ»:

ՎԵՐԶԻՆ ԼՈՒՐԵՐ

Փարիզ 10 օգոստոս.
Երևան արդարացի թիկնո՞ւն հաւանական թեթիթն է.

Օսմ. նոր փոխառութիւն 4841/16

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Ղալաթիոյ մէջ կադմուսա՛ մասնաւոր ընկերութիւն մը՝ Թրամուէլ ընկերութեան հետ բանակցելով՝ Օմիիպիւս և Վոլքըր կառ. քեր բանեցընելու արտօնութիւնը հինգ տարւոս համար վարձեց անկէջ , բոլոր կառ. քերովը, ձիերովն և ուրիշ նիւթերով Վարձակալութեան Դիւանոյ պարմաններն են բոլոր հասութիւն հարուրին 15 Թրամուէլի ընկերութեան տայ , առ նոսոցն ամիոր 300 լիւրս և

Կը խնդրուի մեզնէ ծանուցանել
Թէ Ասիա լրացիրն յառաջիկայ շա-

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

31 լուրիս հորեքաբթի իրիկուն 48 37

ἡ ὁμοθυμία ἐκείνη, ἡ ἀποστολή

48.33

48 30 11

Կ. Պոլիս 34 յունիս.			
Սօսիէթէ ժէնէրալի բաժինը	Սնդդիւր	628	
« փոխանակութեան »		4	5
Կ. Պոլսոյ Պանքային »		420	
Գրէտի ժէնէրալ »		920	
Գրէտի Սոսիէթի-Թիւրք			
Երկարութեան հին	Յոր	107	3/4
	նոր	81	
Փոխ. 1863	»	314	
» 1865	»	315	
» 1869	»	264	
» 1872	»	76	
Բերանութիւն	Օսմ. լիր	5	75

ԸՆԹԱՆԻՐ ԳՐԱՄՈՑ
31 Յունիս

Անդր. Կրտ.	409.25
Նաթ. Կրտ.	87.26
Կրտ. Կրտ.	89.5
Գրք. Կրտ.	51.24
Հինգ. Գրտ.	—
Հինգ. Գրտ.	104.25
Պոլիս	125.20

Ա. Զ. Գ. Ա. Յ. Ի.

ԿՐՈՆԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՑ ԾԱԲՍԹ ԱՒՈՐ
ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԾԱՆՈՒՑՈՒՄԸ
Բ.

Ինչպէս ամեն մարդ գիտէ, անձնականութեան վերաբերեալ հըրատարակութեանց մասին զգուշացութիւնը միշտ սերած ենք և կը սիրենք. բայց ազգային պաշտօնէից, եկեղեցական ըլլան թէ աշխարհական, իրենց պաշտաման մէջ ըրած պահանջները ցուցնելու և տնոնց ուղղութիւնը պահանջելու իրաւունքն ալ չենք կրնար ժխտել. վասն զի քննարկ հասարակաց է: Եկեղեցականի մը վրայ տեսնուած անկարգութիւն, մոլորութիւն կամ յանցանք՝ իւր հասարակային պաշտօնին կը դպչին, հետեւեալ ինչպէս հասարակութեան՝ նոյնպէս և անոր բերան եղող լրագրաց ալ իրաւունքն է գանգատիլ և բողոքել:

Ուստի կրօնական ժողովոյ յառաջ բերած այն առաքելական կանոնը՝ որ քահանայն չանարգել, չանգոռնել և չարհամարիւն կը պատուիրէ, ամեն ճշմարիտ քրիստոնէի պարտքն է յարգել, բայց անարդ և անարժան դործերու մէջ դանդաղ քահանայի մը դէմ հրապարակաւ չբողոքելու տըրամադրութիւն մը չենք տեսներ այդ պատուելին մէջ:

Ո՞ր առաքելալ կամ ո՞ր Ս. հայրապետը պատուէր կամ հրաման տըրած է անորք և անորքան մարդիկը քահանայ ձեռնադրելու և յետոյ ժողովրդէն պահանջելու որ չմեղադրէ անոնց անարդ և անարժան ընթացքը, կը գիտեալք ինք գիտնալ զայս:

Մեր գիտցած ու ճանաչած առաքելայինքն ու հայրապետներն՝ ընդհակառակն՝ շատ պատուէրներ գրած և կանոններ սահմանած են, որոց դործադրութիւնը դժբաղդաբար չենք տեսներ մեր եկեղեցական իշխանութեան կողմէ. և ցաւալի է ըսել որ մեր եկեղեցականներէն շատեր և նոյն իսկ կրօնական ժողովոյ անդամներէ ոմանք՝ նոյն կանոնաց և պատուիրանաց հակառակ ընթացից մէջ կը դըրանուեն, մինչդեռ անոնց պահանջներու մէջ մեր ժողովրդական հսկելու նուիրական պաշտօնն ունին:

Մեր հաստատ համոզումն այս է թէ՛ երբ եկեղեցական իշխանութիւնն անաշու խտուրթեամբ իր պարտքը կատարէ, այսինքն զեղծմանց և անկարգութեանց աչք չգոցէ և կանոնադրանց եկեղեցականներն անպատիւ չթողու, անկարգութիւններն ու զեղծումները կը պակսին, կանոնապահ և բարեկրօն եկեղեցականաց յարգն առաւել կը ճանչուի, և կրօնքը կը շահի:

Ժամանակաւ կը յիշենք որ կանոնադրանց քահանայից փոխներ կանոնէր և օրերով դասին ետևը ժողովրդէն մէջ կեցած կազմէին առանց եկեղեցական պաշտօն վարելու: Աւելի ծանր յանցաւորներն ալ Պատրիարքարանի կամ հիւանդանոցին մէջ կը բանտարկուէին, ամենք ալ մանաւանդ վարդապետներն հեռաւոր վանքեր կը զրկուէին ապաշխարելու: Միթէ այն ժամանակ այս խտուրթիւնները ժողովրդէն գոյթնալով ինչ կը պատճառէին, միթէ այն ժամանակի ժողովուրդն այժմանէն նուա՞ղ կրօնասէր էր: Ընդհակառակն ինչո՞ւ ուրեմն հիմա չենք դործադրել այն խտուրթիւնները ինչո՞ւ անբարոյականութեան ամբաստանութեամբ դատի ենթարկեալ և կեղեցական հոգեւոր պաշտօնէ չը դադրել, և մինչև իսկ կրօնական ժողովոյ անդամակցութեան կընդունելի առանց անմեղութիւնն ստուգուած ու հաստատուած ըլլալու:

Ո՞րն է գայթակղութեան առիթ, եկեղեցական իշխանութեան այս թիւլ կամ անհոգ ընթացքը՝ որ աշխարհութեան ու կողմնակցութեան կասկած կը ծագէ ժողովրդէն մտաց մէջ. թէ վերոյիշեալ կանոնական խտուրթիւններն, որք կրօնի սրբութիւնն ու եկեղեցւոյ բարեկարգութիւնը կապահովէին և կրօնական իշխանութիւնն ալ ակնածելի կընէին:

Ժամանակաւ իշխանադոր ամիրաներ կային, որք կրնային մեղապարտ եկեղեցական մը պաշտպանելով դատաւարութիւնն ու պատժէ ազատ պահել. հիմա ո՞վ կրնայ արդեւել եկեղեցական իշխանութիւնն իր պարտքըն ըստ օրինի կատարելէ:—Ոչ ոք:

Ուրեմն դո՛հ պիտի ըլլանք եթէ կրօնական ժողովն իւր խտուրթն համեմատ անկարգ կամ յանցաւոր եկեղեցականներն անմիջապէս դատելով պատժէ և յուղղութիւն անէ: Բայց առաւել դո՛հ պիտի ըլլանք եթէ առաքելական և հայրապետական սահմանադրութեանց մէջ դըրանուած կանոններն ալ ամբողջապէս և ճշդիւ դործադրելու հոգ տանի, նախ եկեղեցականներէն սկսելով: Այն ժամանակ ստուգելու մեծ ծառայութիւն մը կընէ ազգին և եկեղեցւոյ, և մեր եւ մեր մասին խօսք կուտանք որ եկեղեցականի մը վրայ գայթակղական դործ մը տեսած կամ լսած ժամանակնիս՝ հրատարակելէ առաջ առ ժամայն հաղորդենք կրօնական ժողովոյ դիւանին, վստահ ըլլալով որ Վստի ընդ փոյթ նկատողութեան պիտի առնու և պարտու պաշտած քննութիւնն ընելով պիտի հրատարակէ թէ՛ անմեղին անպարտ ելնելը և թէ՛ յանցաւորին ընդունած դատապարտութիւնը:

Այս առիթի ևս թող ներքէ մեզ կրօնական պատկառելի ժողովն յիշեցնել իրեն, թէ ինքը միայն որոշողական իրաւունք ունի, իսկ իր որոշման դործադրութեան իրաւունքը Սրբազան Նախագահին (Պատրիարքին) կը վերաբերի ըստ Սահմանադրութեան:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

Կայսերական հրամանաւ թաղերը շրջադադող կալուածադիր պաշտօնէից կողմէն գանդատներ հասած ըլլալով՝ ի Պատրիարքարան, թէ կալուածատէրները չեն ստանիր իրենց կալուածադիրը և չեն արձանագրել տար, որով կալուածներն ի գիր առնելու դործը կերկարածալի, Պատրիարքարան հարկ կը համարի ի պաշտօնէ ծանուցանել այն ամեն ազգայնոց, որ

իրենց կալուածները դեռ արձանագրել չեն տուած, որպէս զի վտանգ օր յառաջ իրենց կալուածադիրը ներկայացընել կալուածադիր պաշտօնէից և իրենց կալուածներն ըստ օրինի արձանագրել տալ՝ ապագայ քննաներէ տղատ մնալու համար:

30 յունիս 1874

Ի Պատրիարքարանի Հայոց
Կ. Պոլիս

... Խմբագրապետ .

Մշտ հանրածանօթ խնդրոյն ներկայումս Ազգային իշխանութեան առ իս ուղղուած պաշտօնական թղթոց պատճէններն, և մեր կողմէն եղած բողոքը, և վերջին պատասխանադրին առ հասարակ ջնդ կը զրկեմ, ինքընեզմը որ հրատարակել հաճիք:

Այս խնդիրը պէտք է հանեմ հասարակաց առնին առաջ, և թողու՞մ որ նոքա դատաւարան առնեն ընդ իս և ընդ վարչութիւնը, փափաքելով միանգամայն, որ ես սխալած լինիմ այս խնդրոյն և իմ բողոքը յոյս մէջ, և վարչութիւնը արդար լինի իւր ապօրինի որոշման մէջ:

Ազգութարար ջնդ
1874 Յունիս 30
Ի ՌԻՄՍՍՆ

Պ. Ա. Տ. Զ. Ի.

Պատրիարքարան Հայոց
Ի կոտանդնուպօլիս
Թիւ 314

Ամենապատիւ Սրբազան եղբայր
Ի Գրիստոս .

Ազգային վանօրէից խորհուրդն Սահմանադրութեան 93-րդ յօդուածոյ ոգւոյն հակառակ և անհամաձայն դրոշմով միացեալ վանահայրութեան պաշտօնի դրութիւնն, որ ժամանակէ մը ի վեր մուտ դուռն էր վանօրէից ոմանց մէջ, իբր ընդհանուր սկզբունք այս կէտը նկատողութեան առնուլ առաջարկեց յատենի խառն ժողովոյ Ազգ. վարչութեան. և այս դրութեան քննադատար հետեւեալներն և վանօրէից յառաջադրուած վանութեան մեծապէս տրեւել լինելը բացատրելով, այս մասին պարտ ու պատշաճ անօրէնութեան վտանգը ցուցնելով խնդրեց Ազգ. վարչութեան:

Խառն ժողովն այս կարեւոր առաջարկութիւնն ի նկատի առնելով, միացեալ վանահայրութեանց բաժանման սկզբունքը թէ՛ Ազգ. Սահմանադրութեան և թէ՛ ջնդ սրբազնութեան Պատրիարքական պաշտօնավարութեան միջոցին Ազգ. վարչութեան վաւերացեալ և հրատարակեալ վանօրէից բարեկարգութեան հրահանգին ոգւոյն համաձայն և օրինաւոր դատաւ և հաստատեց զայն:

Հետեւապէս սոյն սկզբունք համաձայն խառն ժողովն այս անգամ վանայ վարագայ վանուց և Մշտ Սուրբ կարապետի վանուց վանահայրութեան, որ յանձն ջնդ Սրբազնութեան միացեալէր մինչև ցարդ, բաժանումն որոշեց, և հարկ դատեց որ սոյն երկուքն միոյն՝ այն է վարագայ վանից վանահայրութեան պաշտօնին շարունակութիւնը մնայ ջնդ Սրբազնութեան վրայ, իբրեւ բնիկ միաբան յիշեալ վանուց. իսկ Մշտ Ս. կարապետի վանքն այսուհետեւ առանձին վանահայրութեամբ կառավարուի, ինչպէս երբեմն:

Խառն ժողովն իւր այս որոշումն տրաման համարեց ջնդ Սրբազնութեան հաղորդել ի տեղեկութիւն, և աներկմիտ է որ ջնդ Սրբազնութեան ալ զայն օրինաւոր պիտի դառնէ:

23 Ապրիլ Մանաք աղօթակից
1874 Պատր. Տեղապահ
ՆԵՐՍԷՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ

Ամենապատիւ
Տ. Մկրտիչ Ս. Արքեպիսկոպոս
Խորիմեան
Նախկին Պատրիարք Կ. Պոլսոյ .

Պ. Ա. Տ. Ա. Ս. Ի. Ս.

Ամենապատիւ սրբազան տէր .

Ի համար 314 ապրիլ 23 թուոյ պաշտօնական ծանուցագիր մի ընդունեցի ջնդ բարձր սրբազնութեանէն, որ ըստ որոշման խառն ժողովոյ զիս կը լուծէ Մշտ Ս. կարապետի վանուց վանահայրութեանէ:

Ներողութիւն կը խնդրեմ, սոյն ծանուցագրին անմիջապէս պատասխան տալ հարկ էր, այլ ես խորհրդողով անդամների, մինչև Հայոց Պատրիարքութեան դահլ իւր տէրը դըտայ. դուռ և արժանապէս դուռ, և ես ուրախ եմ համայն ազգին հետ:

Ուրախ եմ նաև, զի այն ինչ դեռ երէկ երեսփոխանական բարձրագոյն ատենէն խնդրեցի որ զիս արձակէր Պատրիարքութեան ծանրաբեռն պաշտօնէն, այսօր կը տեսնեմ խառն ժողովն այդ շնորհը ինքնին կընձեռէ և կարճակէ զիս առանց խնդրանաց. թերեւ խնամտանքով կարեկցաբար թէ խորիմեան վաստակաբեկ եղած է իբրեւ երկրադործին խոնջած եղբ, և այլ ևս չը կարէ դարձր յառաջ վարել ու հերկել Մշտ աշխարհի կործանած դատար, պէտք է լուծել զայն ի լծէն և ուրիշ դուռն որ պարանոցի մի վրայ դնել, որ կարողանայ տանիլ և ժրագէտ հերկելով միջակել ու պարագեւր առնել այն երկիրն, որուն վրայ շատ մշակներ քրտնալատալ աշխատութեամբ հաստատուած են:

Եթէ ստոյգ այսպէս խնայաբար դատէր Ազգ. վարչութիւնը, ես կամակար կը խոնարհէի նորա իրաւանց և դատաւարանին առաջ. բայց ոչ այսպէս կը դատի և ոչ օրինօք կը վարի: Այլ հին աշխատաւոր վատարկաւոր եղն իւր լծէն անձրկած ժամանակը՝ զայն ակօսին մէջ կը մորթէ ապաժայտ կերպով, և կը ջանայ Սահմանադրութեան 93-րդ յօդուածոյ ոգւոյն դրոշմութեամբ վճիռ հանել և արդարանալ:

Կը ներտի նաև մեր ձեռք վաւերացած վանօրէից հրահանգին տըրամադրութեամբ պաշտօնավարման առնել զիս, այսինքն է մեր պատրաստած դէնքով մեր պարանոց հատանել: Այո՛, այդ հրահանգի դէնքը նախորդ վարչութիւնը իւր անկողնար կռնով կռեց, եւ հաւանութեամբ ասորագրեց զայն և նա առաջադրեց դործադրութեան դնել առանց ընդհանուր ժողովոյ վաւերացման. և միթէ կարելի է՞ սոսկ Պատրիարքին ստորագրութիւնը օրէնք կամ օրինաց հրահանգը վաւերական դրոշմել: Բայց ես չեմ խուսափիր. դարձեալ ջնդ վաւերական համարած հրահանգով պիտի խօսիմ, զի այդ հրահանգն, ևս դիւրութեամբ պաշտօնեաց մի չի լուծեր առանց օրինական միջոցներն ի գործ դնելու:

Ազգ. վարչութիւնը իւր ծանուցագրին մէջ յառաջ կը բերէ նաև վանօրէից խորհրդոյ առաջարկութիւնը, որ միացեալ վանահայրութեան պաշտօնի դրութիւնը Սահմանադրութեան ոգւոյն հակառակ և անհամաձայն կը կարծէ. մի՞ դուցէ իւր այս դրութեան համեմատ Աւետարանի առաւել ևս սրբադրէ վանօրէից խորհուրդն, որ առնի և հաստատարի ծառային իրաւունքը կուտայ իշխել ի վերայ հինգ կամ տասնքապարաց:

